

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆրանսիական նոր մինիստրութեան ծրագիրը.—Ֆալլուի օրէնքը.—Բարձր բուրժուական շրջանների բարձրից.—Ժօրեաի խօսքերը խաղաղութեան մասին.—Էդուարդ VII-ի թագադրութեան հանդէսի լեռաձգումը.—Բուլղարական իշխանի և խալական թագաւորի այցելութիւնը Քաղաւոր Կայսրին:

Պօլսի թերթերից. Սանասարեան վարժարան և Նիքատ Կօլէժ.— Կեսաբիոյ Ս. Կարապետ վանքի դպրոցը.—Ֆերմանական երկսեռ որբանոց Վանում.—Կիլիկիայի կոթողիկոսական ընտրութեան հարցը.—Արդի Հայերէնի Բառարանի հարցը.—Ձահանգեանի մահարձանի առիթով:
Դանեմարկցի հայասէրները:

Մեր անցեալ տեսութեան մէջ մենք տեսանք Ֆրանսիական նոր մինիստրութեան կազմը, որ բացի Բուվիէից և Դելկասսէից ամբողջապէս արմատականներից է բաղկացած:

Մինանների մինիստրը, Բուվիէն, այն չափաւոր հանրապետականներից կամ օպպօրտունիստներից է, որոնք կամայ կամայ աջակողմն են թեքում, մինչդեռ, ինչպէս յիշել ենք մի անգամ, Վալդէկ-Բուսսօն նոյնպէս Գամբետտայի շկօլից է, օպպօրտունիստ է, բայց, մանաւանդ Դրէյֆուսեան պայքարից յետոյ, իր համակրանքներով մօտենում է ձախակողմեաններին, այսինչն՝ աւելի արմատական կուսակցութեան:

Բուրբուլին այլ դիրք է բռնում արտաքին գործերի մինիստր Դելկասսէն. իբրև բուն դիպլօմատ նա լաւագոյն է համարում ոչ մի կուսակցութեան չը պատկանել... և դրա չնորհիւ անաչորս տարի է անընդհատ վարում է նոյն պաշտօնը, չը նայած որ այդ ժամանակի ընթացքում փոխուել են չորս մինիստրութիւններ, Բրիսսօնի, Դիւպլուի, Վալդէկ-Բուսսօյի և այժմ Կամբի:

Կամբի կարինէտը երկար սպասել չը տուեց իր ծրագրի յայտարարութեան: Պրօքրամը հետևեալն է լինելու. միալանութիւնների նկատմամբ օրէնքների խիստ գործադրութիւն, Ֆալլուի օրէնքի վերացում, ընդհանուր եկամտային տուրք. ղինուորա-

կան դատաստանների րեֆորմ, ղինուորական ծառայութեան ժամանակամիջոցի կրճատումը մինչև երկու տարի, երկաթուղիները պետական դարձնելու հարցի ուսումնասիրութիւն, բանուորական ապահովագրութեան ու կենսաթոշակի կազմակերպութիւն:

Այս բոլոր կէտերից մեր ընթերցողների համար առանձին բացատրութեան կարօտ կարող է լինի Ֆալլուի օրէնքը: Ֆալլուն քառասնական թուականներին կղերական կուսակցութեան յայտնի պարագլուխներից էր. դառնալով լուսաւորութեան միւստր, նա «ուսուցման ազատութեան» ջերմ ջատագով էր. սակայն այդ «ազատութիւնը» լոկ պատրուակ էր՝ կղերական ազդեցութիւնը Ֆրանսիայում ամրագնելու համար: Ֆալլուի օրէնքով իւրաքանչիւր որ իրաւունք ունի դպրոց բանալ, և որովհետև կղերը Ֆրանսիայում ունի բոլոր նպատատու որ պայմանները և ահագին նիւթական միջոցներ, ուստի նա փոստաւորապէս օգտուեց այդ «ազատութիւնից»: Ֆրանսիայում գլխաւորական կամ համալսարանական դիպլոմ ստանալու համար պահանջուում է քննութիւն տալ պետական կոմիսսիայի առաջ, իսկ իւրաքանչիւր որ կարող է պատրաստուել, ուր կամի: Կղերականների դպրոցները գրաւում էին Ֆրանսիական երիտասարդների մեծագոյն մասը, որը դուրս է բերում այդ դպրոցներից հակահանրապետական ոգի և տոգորուած է լինում ատելութեամբ դէպի հանրապետութեան հիմնարկութիւնները: Կղերական խմբով ապականուած այդ երիտասարդները դառնում էին ապա օֆիցէրներ և պետական պաշտօնականներ: Դուրս էր գալիս որ կառավարութիւնը ինքը իր համար թշնամիներ է պատրաստում: Հասկանալի է, ուրեմն, որ Ֆալլուի օրէնքի վերացումով ահագին հարուած է հասցւում կղերական կուսակցութեան Ֆրանսիայում:

Այդ կուսակցութեան կողմն է խոշոր բուրժուազիայի և ազնուականութեան համակրանքը. այժմ դրանք պէտք է ստիպուած լինեն իրանց որդիերանց կրթել հանրապետական ոգիներ: Զնոդ դպրոցներում. այլ ևս կեղծ բարեպաշտութիւնը, ի ցոյց մարդկանց բարեգործութիւնը ու «ազնուականութեան» մասին բարբալանքները անգոր կը լինեն մոլորեցնել մատաղ մտքերը և հանրապետութեան համար փչացած սերունդներ պատրաստել: Սերունդներ, որոնց տիպիկական ներկայացուցիչները երբեմն աշխարհահռչակ են դառնում իրանց բարոյական քոստմոնի այլանդակութեամբ: Այդպիսի ներկայացուցիչներից էին անցեալ տարի դատի ենթարկուած Մօնիէները, «պատուաւոր ազնուական և բուրժուազական» ընտանիքից Մօնիէ մայր և որդին, որոնք զծուծութիւնից և փողատիրութիւնից այնքան քարասիրտ էին

դարձել, որ, առաջինը իր հարազատ աղջկան և երկրորդը իր հարազատ քրոջ, երեսուն տարի փակել էին մի մութ սենեակում, յուսահատութիւնից, քաղցից և զարհուրելի ապականութեան մէջ ապուշ դարձնելով երբեմն շնորհալի օրերորդ Բլանշին. դրա միակ յանցանքը այն էր, որ սիրում էր փողազուրկ մի երիտասարդի, մինչդեռ «բարեպաշտ» մայրը և «բարձր շրջաններում յարգուած» նրա եղբայրը չէին ուզում բաժանուել ոսկիներից և օժիտ տալ նրան... Այդ «բարձր շրջանի» բարքերն լաւ բնորոշում է և Էմբերների հսկայական խարդախութիւնը. քսան տարի շարունակ Էմբերները վայելում էին Պարիզի «բարձր շրջանների» յարգանաց կատարեալ հաւաստիքը, ապրում էին արքայազնայել, իրանց սալօնում ընդունում էին պրօֆեսորներ, մինիստրներ, արուեստագէտներ, բանկիրներ, լուկուլլուսեան ճաշեր, ճոխ պարահանդէսներ էին սարքում, միլիօններ էին փոխառնում, կազմակերպել էին «Ռիանթ վիաժէո» ակցիօներական ընկերութիւն և ծծում խղճուկ մարդկանց վերջին խնայողութիւնները։ Եւ այդ բոլորը հիմնուած էր մի ճարպիկ խաբւրայութեան վրայ, սգոտելով քաղաքայիական դատաւարութեան մի թոյլ կողմից—նրա ձեւականամոլութիւնից, ֆօրմալիզմից, Դատաւորները, ծրէնքով, պէտք է միայն ներկայ լինեն կողմերի մրցութեան. թող թէկուզ այդ մի կողմը տիկին Էմբերի ճարպիկ հնարագիտութեան արդիւնք լինի, աշխարհում չեղած մի միլիօնատէր կրաուֆօրդ, որը իբրեւ թէ կտակել է այդ տիկնոջ 100 միլիօն որոշ պայմաններով, սակայն իրանց հօբեղօր կտակը չընդունող երկու չեղած եղբորորդիները քաշքշում են այդ կլետակի իրադրութեամբ... Ձեւական կարգը, թղթերը, նօտարների վաւերացումները բաւական էին որ բոլորն էլ, դրանց հետ և դատաւորները և բանկիրները, զոհ դառնային «XIX-րդ դարի այդ ամիսամեծ խարդախութեան»։

Ինչպէս Պանաման, այնպէս էլ Էմբերների խարդախութիւնը և Մօնիէ ընտանիքի գործը՝ միայն խոշոր ձեւով պատկերացնում են բուրժուազական կենցաղի և կարգերի քստմանի կողմերը. սակայն պէտք է հաւատացած լինել որ ամեն օր, ամեն րոպէ կենսւթի մէջ կատարւում են փոքրիկ Պանամաներ, փոքրիկ Էմբերեան խարդախութիւններ և Մօնիէական վերաբերմունքներ դէպի մերձաւորը։ Այդ բոլորը արդիւնք է որոշ հասարակական կարգերի. մանր, սովորական դէպքերը աննկատելի են մնում և կարծես միայն այդ խոշոր, տիպիկական արտայայտութիւնները ոյժ ունեն ցնցել և ցոյց են տալ հասարակական չէնքսի ձեղքերը...

Այդ ճեղքերը պահպանողական կուսակցութիւնները ուղում են փախաներով մի կերպ ծածկել, մինչդեռ հարկաւոր են արմատական վերանորոգութիւններ: Եւ երբ այս վերջին, այսօրն հիմնական վերանորոգման, հարցն է դնուում—բոլոր երկրներն պահպանողականները կատաղում են: Դրան ապացոյց է մի դէպք:

Նշանաւոր է որ «խաղաղութեան» մասին գեղեցիկ ճառեր արտասանող պահպանողականները վրդովուած էին ժօրեսի հետեւեալ խօսքերից, որ նա արտասանել էր նորերս պատգամաւորների ժողովում:

«Ինչ վերաբերում է նոր մինիստրութեան առաջարկութեան—կրճատելու զինուորական ծառայութեան ժամանակը, ասաց նա,—բանուորական կուսակցութիւնը դրա մէջ տեսնում է միայն առաջին քայլը: Բոլոր երկրների բանուորական պրօլետարիատը աւելի և աւելի յամառ և միահամուռ սկսում է պահանջել՝ Եւրոպայի ընդհանուր զինաթափումը: Ե՛րբ, վերջապէս, կը յաղթանակի իմպերիալիստութեան և մարդկայնութեան ձայնը: Ով գիտէ, գուցէ, միւս ազգերը միայն սպասում են նշան Ֆրանսիայից, նրա բարի օրինակին հետեւելու համար: Յամենայն դէպս վաղուց ժամանակ է հրաժարուել կեղծաւոր և երկդիմի քաղաքականութիւնից այդ հարցում: Գամբետտայի հռչակաւոր բանաձեւը. «որոշ հարցերի մասին պէտք է մտածել, բայց ոչ բարձրաձայն խօսել»—ունէր կորստաբեր ազդեցութիւն: Ի՞նչն է խանգարում Ֆրանսիային ի լուր ամենքին առաջարկել ընդհանուր զինաթափութիւն: Իսկ եթէ կարծում էք թէ այդ անարժան կը լինէր Ֆրանսիային, ինչո՞ւ էինք մենք ուղարկում մեր ներկայացուցչին Հաագայի համաժողովին: Մեր կուսակցութիւնը կարծում է որ չի կարելի այլ ևս յետաձգել պատերազմի կամ խաղաղութեան հարցը: Նա դրականապէս կանգնած է խաղաղութեան կողմը, բայց մի և նոյն ժամանակը հաւատացած է, որ մինչեւ անգամ պատերազմը դերադասելի է անորոշ դրութիւնից, երբ ազգը, հաւատարմանելով իր խաղաղասիրական միտումների մասին, աւելի և աւելի ուժեղացնում է իր սպառազինութիւնը: Միւս կուսակցութիւնները մեծ սըլխալ են գործում, սօցիալիստներին թողնելով մենաշնորհ՝ խօսել այս հարցի մասին չիտակօրէն և բացարձակ:»

Այդպէս վերջացրեց ժօրեսը իր ճառը, որ յարուցեց Դերուլէի կողմնակիցների կատաղի զայրոյթը:

Խաղաղութեան մասին սիրում են խօսել և Եւրոպայի միապետները: Դրանցից անգլիական թագաւոր Էդուարդը, արգարեւ, իր անձնական ազդեցութիւնը չը խնայեց ամեն կերպ

արագացնելու համար խաղաղութեան վերականգնումը Հարա-
ւային-Աֆրիկայում: Իր այդ բնաւորութեան շնորհիւ, անգլիա-
կան թագաւորը մեծ սէր է վայելում բրիտանական բոլոր հպա-
տակների կողմից: Այդ զգացմունքը, երեւի, արտակարգ կերպով
կը յայտէր նրա թագադրութեան ժամանակ, որը, ինչպէս յայտ-
նի է, անսպասելի կերպով յետաձգուեց, մինչեւ որ թագաւորը
կը կազդուրուի իր վտանգաւոր օպերացիայից:

Խաղաղութեան խօսքը բաց չի ընկնում նաև Բուլղարիայի
իշխանի և իտալական թագաւորի շրթունքներից, ինչպէս զը-
ժուար չէր տեսնել այն ճառերից, որ զրանք արտասանեցին
թագաւոր Կայսրին արած այցելութեան ժամանակ: Թէև ի զուր
չեն կարծում ոմանք որ Բալկանեան թերակղզու վրայ (Մակե-
դոնիա, Ալբանիա) մօտիկ ապագայում կատարուելիք փոփոխու-
թիւններից օգտուելու մեծ ակորթականք ունեն թէ Բուլղարիան
և թէ Իտալիան: Եթէ ի նկատի ունենանք Ռուսաստանի ահա-
գին ազդեցութիւնը Բալկանեան հարցերում, հասկանալի կը
լինեն այդ այցելութիւնների և՛ քաղաքական նպատակները...

Լ. Ս.

30 Յունիսի.

Պ Օ Լ Ս Ի Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

Սանասարեան վարժարան և Եփրատ Գոլէմ

Սանասարեանը՝ Խարբերդ, Սորսորի Վանքը պիտի փոխա-
դրուի: Տարիներու խրամատը կ'ջնջուի, ու կ'տեղափոխուի
վերստին Խարբերդի բարձունքը: Ընդարձակ դաշտին մէջ դէպ
ի արևմուտք, քաղաքէն երեք ժամու չափ հեռու կ'տեսնեմ
Սորսորիկ Վանքին բլուրը, որուն համար տասը տարիներ ա-
ռաջ արդէն լսած էինք թէ Սանասարեանի յատկացումը վայրը
պիտի ըլլայ: Լերկ բլուր մ'է չրջակայ կանանչութեանց ու
դալարներու միջև բարձրացած, կողը տուած բլուրներու շարքի
մը, որուն մէկ ծայրին ետին կ'պահուի Թլկատինցիի ծննդավայր
գիւղին ծառախիտ կէսը:

Բլուրին առջևէն կ'անցնի ուղիղ և անորոր գծով Մալաթիոյ
ճամբան, Պոլսէն Պաղտատ թղթատարի մեծ կառուղին: Քաղ-
քէն ունեցած հեռաւորութիւնը առանձին նշանակութիւն ունի
այս յօդուածին համար: Այդ բլուրին չրջակայքը ցանցնուած են